



**Հոդվածի հղումը.** Միքայելյան Մ., Միքայելյան Գ. (2024), Հայաստանում տնտեսական մրցակցության պաշտպանության մի քանի հարց, *Տնտեսություն և հասարակություն*, ՀՊՏՀ, *Տնտեսագետ*, 2(5), 120-136,  
DOI: 10.52174/29538114\_2024.2-120


**Ներկայացվել է խմբագրություն՝** 16.07.2024 թ.

**Ուղարկվել է գրախոսության՝** 30.08.2024 թ.

**Երաշխավորվել է հրատարակման՝** 18.11.2024 թ.


## ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների  
ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.  
տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

 <https://orcid.org/0009-0008-7426-1883>

## ԳԱԲՐԻԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0001-6736-8123>

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով կամ ՄՊՀ) ավելի քան 23 փարվա գործունեությունը ցույց է տալիս, որ, որոշակի դրական փորձի հետ մեկտեղ, պետական մարմինը մասնագիտական լուրջ առաջընթաց չի գրանցել: Հեղինակների կարծիքով՝ դա պայմանավորված է Հանձնաժողովի աշխատակազմի հաճախակի փոփոխությամբ և կառավարման այս մարմնի ձևավորման մեխանիզմի անկատարությամբ: Այդ մասին է վկայում Հանձնաժողովի տարբեր ժամանակաշրջանների տարեկան ծրագրերի ու հաշվետվությունների ուսումնասիրությունը:

Ապրանքային շուկաները վերլուծելիս նկատվում են մեծ թվով մասնագիտական սխալներ ու բացթողումներ: Մասնավորապես՝ Հանձնաժողովի 2008 թվականի հաշվետվության «Ապրանքային շուկաների վերլուծություն» գլխում ներկայացվել են ֆիրմաների թիվը, դրանց իրացման ծավալները, համակենտրոնացման գործակիցները (CR<sub>3</sub>) և 1-ին 3 խոշոր ֆիրմաների բաժինները: Մինչդեռ, այդ ցուցանիշների պարզումը վերլուծության տարրեր են միայն: Ապրանքային շուկաների վերլուծության նպատակը դրանցում մրցակցային միջավայրի վիճակի գնահատումն է: Իսկ Հաշվետվության մեջ

որևէ շուկայի վերաբերյալ գնահատական չի տրվել: Սա փաստում է այն մասին, որ Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի համապատասխան մասնագետները արհեստավարժության որակները բարելավելու կարիք ունեն:

Շարք դեպքերում հենց դրանով է պայմանավորված մրցակցային միջավայրի գնահատման անարժանահավաքությունը:

Հեղինակների կարծիքով՝ Հանձնաժողովի ձևավորումը պետք է բացառի սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը. մասնավորապես՝ դրան կարելի է հասնել պրոֆեսիոնալ, անկախ և թափանցիկ կադրային բանկերի ձևավորման միջոցով:

**Հիմնաբառեր.** ապրանքային շուկա, աշխարհագրական սահման, ապրանքատեսակային սահման, ժամանակային սահման, պետական մարմին, կադրային բանկ

JEL: G18, L40, O17

DOI: 10.52174/29538114\_2024.2-120

**Ներածություն:** Հանձնաժողովի գործունեության ավելի քան 23 տարվա ընթացքում պետական մարմինը ղեկավարել է 5 նախագահ: Նրանցից յուրաքանչյուրն ունեցել է աշխատակազմի ընտրության իր «փիլիսոփայությունը»: Պատահական չէ, որ այդ ընթացքում աշխատակազմի ավելի քան 95%-ը փոխվել է: Մասնագիտական կադրերի առավել մեծ հոսունություն նկատվել է վերջին 3 նախագահների ղեկավարության ընթացքում, իսկ վերջին 2 նախագահները փոխել են մասնագիտական բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին: Բնականաբար, կադրերի նման փոփոխությունները չէին կարող իրենց բացասական ազդեցությունը չթողնել աշխատանքի որակի վրա: Մասնավորապես՝ այդ են վկայում Հանձնաժողովի տարեկան գործունեության ծրագրերի<sup>1</sup>, հաշվետվությունների, առանձին ապրանքային շուկաների վերլուծությունների, ինչպես նաև Հանձնաժողովի պատասխանատուների՝ մրցակցությանն առնչվող ելույթների ու մեկնաբանությունների ուսումնասիրությունները: Նման գործելաճրդ և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ պատճառներ ունի: ՄՊՀ գործունեության ամբողջ ժամանակահատվածում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) մեծ թվով փոփոխություններ ու լրացումներ են կատարվել, որոնցից երկուսը՝ արմատական: Բայց դրանցից ոչ մեկում ՄՊՀ անդամներին արհեստավարժության պահանջներ գրեթե չեն ներկայացվել: Այդ է պատճառը, որ Հանձնաժողովի որոշ անդամներ հարցազրույցներում, բանավոր խոսքում, անհատական կամ հավաքական դիրքորոշումներում մասնագիտական սխալներ են թույլ տալիս: Մասնագետների կողմից Հանձնաժողովի գործունեության տարեկան ծրագրերում, հաշվետվություններում, ապրանքային շուկաների ուսումնասիրություններում բազմաթիվ, նույնիսկ տնտեսագիտությանն առնչվող դասագրքային անճշտություններ և հակասություններ են արձանագրվել և մինչև հիմա էլ

<sup>1</sup> Մինչև 30.03.2021 թ. օրենքում կատարված արմատական փոփոխությունը, Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 1-ը Ազգային ժողով է ներկայացրել հաջորդ տարվա գործունեության ծրագիրը, իսկ մինչև մայիսի մեկը հրապարակել է տարեկան գործունեության հաշվետվությունը: Սակայն 03.03.2021 թ. Օրենքում կատարված փոփոխությամբ Հանձնաժողովը տարեկան գործունեության ծրագիր ներկայացնելու պարտականություն չունի: Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (30.03.21, ՀՕ-92-Ն), հոդված 48, <http://www.parliament.am/legislation.php?sel=alpha&itype=3&lang=arm#30>

արձանագրվում են: Դրանով պայմանավորված՝ խիստ արդիական է ՄՊՀ ձևավորման, դրա անդամների ընտրության թափանցիկ, անկախությունն ու արհեստավարժությունն ապահովող մեխանիզմի ստեղծումը:

Ըստ այդմ՝ սույն հետազոտության նպատակն է հիմնավորել ՄՊՀ անդամների ընտրության թափանցիկ, անկախությունն ու արհեստավարժությունն ապահովող մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը:

**Գրականության ակնարկ:** ՄՊՀ գործունեության վերլուծության վերաբերյալ դրա ստեղծման օրից ի վեր, ավելի քան 23 տարիների ընթացքում, մեծ թվով հրապարակումներ են եղել: Առավել ընդգրկուն և համակարգված հրապարակում է Մ. Միքայելյանի մենագրությունը<sup>2</sup>, որում ներկայացվել են տնտեսական մրցակցության և մենաշնորհների տեսական հարցերը և մեթոդաբանական մոտեցումները, շուկայի կարգավորման չափանիշները և խնդիրները: Կարևորվել են ապրանքային շուկաներում չարաշահումների բացահայտման մեթոդաբանական հիմքերը: Անդրադարձ է կատարվել նաև 2001–2004 թթ. Հանձնաժողովի ուսումնասիրած առանձին ապրանքային շուկաների վերլուծություններին, և հեղինակը ներկայացրել է իր մոտեցումներն ու գնահատականները:

Հանձնաժողովի գործունեության առաջին երկու տարիներին ի հայտ են եկել օրենքում տեղ գտած մի շարք հակասություններ ու բացթողումներ, ինչպես նաև վերլուծությունների ընթացքում Հանձնաժողովի թույլ տված որոշ անճշտություններ<sup>3</sup>: Մասնավորապես՝ «անձանց խումբը» գնահատելու համար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում և մրցակցությունը կարգավորող Օրենքում այդ եզրույթը տարակերպ է դրակված: Հեղինակն առաջարկել է այդ եզրույթի սահմանումը երկու օրենքներում էլ նույնկերպ ձևակերպել: Անդրադարձ է կատարվել նաև ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանի ու գերիշխող դիրքի մեկնաբանություններին<sup>4</sup>:

Մի խումբ հեղինակների կողմից քննարկվել են ապրանքային շուկաների վերաբերյալ Հանձնաժողովի գնահատականները: Այսպես՝ Հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո (2018 թ. հունվարի 1-ից) գնահատվել է դրա ազդեցությունը բենզինի և դիզելային վառելիքի գների վրա, հաշվարկներով ցույց է տրվել, որ այդ ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողների չարաշահումներ: Մինչդեռ, պատասխանատու պետական մարմինը «չի նկատել» դրանք<sup>5</sup>: Դիտարկվել են մի շարք ապրանքային շուկաների վերաբերյալ վերլուծություններում Հանձնաժողովի թույլ տված բացթողումները<sup>6</sup>: Որոշակի ապրանքային շուկաների վերլուծության

<sup>2</sup> Տե՛ս **Միքայելյան Մ.**, Տնտեսական մրցակցություն և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Նահապետ», 2005 թ., 253 էջ:

<sup>3</sup> Տե՛ս **Միքայելյան Մ.**, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կատարելագործման մի քանի հարց, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 2002, № 13 (20), էջ 19-24:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս **Mikayelyan M., Markosyan A., Matevosyan E., Miqaelyan Sh.**, Round the issue of the protection of economic competition; Bulletin of high technology, Shushi, 2(6), 2018, էջ 61-67:

<sup>6</sup> Տե՛ս **Միքայելյան Մ., Միքայելյան Գ.**, Տնտեսական մրցակցության կարգավորման հարցի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», N3 (654), 2018, էջ 148-156:

շնորհիվ, ՏՄՊՊՀ օրինակի հիման վրա, առաջարկվել է ՀՀ պետական ինքնավար մարմինների ձևավորման մեխանիզմ<sup>7</sup>:

Գ. Միքայելյանը ներկայացրել է ԱՊՀ երկրների հակամենաշնորհային քաղաքականության համեմատական վերլուծությունը<sup>8</sup>, ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ֆիրմաների գործունեության կարգավորման հիմնախնդիրները<sup>9</sup>, ինչպես նաև պետական օժանդակության հակամենաշնորհային կարգավորումները<sup>10</sup>:

Հեղինակը նպատակային է համարել Եվրամիության մրցակցության պաշտպանության փորձը ԱՊՀ տարածաշրջանի երկրներում կիրառելը<sup>11</sup>: Կարևորել է նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում առկա կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթների վերացումը<sup>12</sup>:

Տ.Վարազդատյանը թեկնածուական ատենախոսության շրջանակում ուսումնասիրել է գերիշխող դիրքի չարաշահումները, ցույց է տվել չհիմնավորված պետական օժանդակության տրամադրման, պատժամիջոցների սահմանաչափերի ընտրության չափանիշների և կարգերի բացակայությունը: Անդրադարձել է 2011 թվականին Օրենքում կատարված փոփոխությունների վերաբերյալ Համաշխարհային բանկի գնահատականին<sup>13</sup>:

Դ. Հովհաննիսյանի մենագրությունը<sup>14</sup> նվիրված է ՀՀ ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի առկա հիմնախնդիրների բացահայտմանը և լուծմանը: Մասնավորապես՝ ՄՊՀ նմանությամբ ներկայացվել են համապատասխան ոլորտների մի շարք ագրոպարենային ապրանքների (2018 և 2019 թվականների գնահատմամբ) ներմուծման, արտահանման, արտադրության, իրացման ծավալների ցուցանիշները: Որոշ ոլորտներում առանձնացվել

<sup>7</sup> Տե՛ս **Միքայելյան Մ.**, ՀՀ պետական ինքնավար մարմինների ձևավորման և անկախության ապահովման հարցի շուրջ, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, № 1(21), 2019, էջ 137-145:

<sup>8</sup> Տե՛ս **Միքայելյան Գ.**, ԱՊՀ երկրների հակամենաշնորհային քաղաքականության միտումները 21-րդ դարի սկզբում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 564-565:

<sup>9</sup> Տե՛ս **Միքայելյան Գ.**, ԱՊՀ երկրների ապրանքային շուկաներում ֆիրմաների գերիշխող դիրքի կարգավորումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3 (623), 2008, էջ 113-120:

<sup>10</sup> Տե՛ս **Միքայելյան Գ.**, Պետական օժանդակությունը և դրա հակամենաշնորհային կարգավորումը ԱՊՀ երկրներում, «Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում», գիտաժողովի նյութեր, Եր., 2009, էջ 267-269:

<sup>11</sup> Տե՛ս **Միքայելյան Գ.**, Տնտեսական մրցակցության կարգավորման Եվրամիության փորձի կիրառման նպատակահարմարությունը ԱՊՀ ընդհանուր տնտեսական տարածքում, Եվրոպական ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու, թ. 1 (01), Եր., 2011, էջ 55-71:

<sup>12</sup> **Միքայելյան Գ.**, Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում որոշ կոռուպցիոն ռիսկերի մասին: Եվրոպական ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու, թ. 6, Եր., 2015, էջ 255-260:

<sup>13</sup> Տե՛ս **Վարազդատյան Տ.**, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման արդի հիմնախնդիրների հաղթահարման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Ը 00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2016, 27 էջ:

<sup>14</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Դ.**, Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում, Եր., 2023, 200 էջ:

են ապրանքային շուկաներն ըստ որոշակի հատկանիշների: Օրինակ՝ կոնյակի շրջանառության ոլորտում առանձնացվել է (ըստ հնեցման տարիների) երեք ապրանքատեսակային սահման՝ երեքից հինգ, վեցից տասը և տասից ավելի տարվա հնեցմամբ<sup>15</sup>: Հեղինակն արձանագրել է, որ երեք ապրանքային շուկաներում էլ համակենտրոնացման մակարդակները, ըստ համակենտրոնացման գործակցի, Հերֆինդալ-Հիրշմանի և Լինդի ինդեքսների, շատ բարձր են եղել<sup>16</sup>:

Նույն տրամաբանությամբ ներկայացվել են կարագի, պանրի, մսի, թռչնամսի արտադրության, ներմուծման, արտահանման ծավալները: Ըստ հեղինակի՝ «Կարագ» ապրանքային շուկայում համակենտրոնացման (հեղինակն օգտագործել է «կենտրոնացվածություն» եզրույթը) աստիճանը բարձր է<sup>17</sup>: «Պանիր» ապրանքային շուկայի հեղինակի «ուսումնասիրությունը» ցույց է տվել, որ դրանում 2019 և 2020 թվականներին համակենտրոնացումը միջին մակարդակի է<sup>18</sup>: Վերջին երկու ապրանքատեսակների առումով եզրակացրել է, որ ոլորտը մրցակցային է<sup>19</sup>: Միաժամանակ, «բացահայտվել են» անբարեխիղճ մրցակցության դրվագներ:

**Հետազոտության մեթոդաբանությունը:** Սույն հոդվածում օգտագործվել են հետազոտության առարկա հանդիսացող տնտեսական երևույթների ուսումնասիրության մի շարք մեթոդներ: Մասնավորապես՝ օգտագործվել են գիտական վերացարկման (շուկայական կառուցվածքներում դիտարկվել են միայն ապրանքատերերի և սպառողների հիմնական խմբերը՝ զերծ մնալով «պատահական» ապրանքատերերի ու սպառողների վարքագծի գնահատումից), վերլուծության ու համադրման (վերլուծվել են Հանձնաժողովի 2008, 2015 և 2019 թվականների հաշվետվությունները, դրանք համադրվել են այլ ապրանքային շուկաների վերլուծության արդյունքների հետ<sup>20</sup> և դիտարկվել են որպես մեկ միասնական ամբողջություն), մակաձուլության ու արտաձման (ուսումնասիրելով վերոհիշյալ երեք տարիների հաշվետվություններում շուկաների վերլուծությանն առնչվող օրենսդրական բացթողումներն ու մեթոդական սխալները՝ դրանք տարածվել են ընդհանուրի վրա, և հակառակը, Հայաստանի

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 103-115:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 113:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 23:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 99:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 132:

<sup>20</sup> Մ. Միքայելյանի կողմից ս.թ. մայիսի 26-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում (վերջինիս հիմնադրման 30-ամյակին նվիրված գիտաժողովում) «Պետական ինքնավար մարմինների գործունեության արդյունավետության բարելավման մի քանի հարց (ՄՊՀ օրինակով)» զեկուցումով ներկայացվել են Հանձնաժողովի 2022 թվականի գործունեության հաշվետվությունում ներառված «ապրանքային շուկա» և «ոլորտ» եզրույթների մեկնաբանման սխալները: Գնահատվել են նույն հաշվետվության մեջ ՊՇՌ թեստերի (պոլիմերագային շղթայական ռեակցիայի հետազոտություն) իրականացման ծառայությունների մատուցման ոլորտում գների սահմանման և պահպանման վերաբերյալ համաձայնության ձեռքբերման և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի վարքագծին, ինչպես նաև «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում այդ ծառայությունները մատուցող բոլոր տնտեսավարող սուբյեկտների վարած գնային քաղաքականությանն ու «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության հետ կնքված պայմանագրերում սահմանված պայմաններին առնչվող ՄՊՀ եզրակացությունները:

ապրանքային շուկաներում առկա ընդհանրական եզրակացությունները վերագրվել են նաև առանձին ապրանքային շուկաներին), տրամաբանական (Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքների գնահատականների կամ ներկայացրած ցուցանիշների միջև անհամապատասխանություն նկատելիս հիմք է ընդունվել տրամաբանությանն առավել մոտ կարծիքը կամ ցուցանիշը) մեթոդները:

**Վերլուծություն:** Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 23.03.2021 թ. խմբագրությամբ կատարված փոփոխությունը՝ 27-րդ հոդվածի, 2-րդ մասի) համաձայն՝ Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 1-ը նախորդ տարվա իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է հրապարակում<sup>21</sup>: Փորձենք վեր հանել Հանձնաժողովի մի քանի տարիների գործունեության՝ Հաշվետվություններում առկա մի շարք բացթողումներ և սխալներ: Հանձնաժողովի **2008 թվականի հաշվետվության մեջ** նշվում է. «Աշխատանքները տարվել են տնտեսվարող սուբյեկտների մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության... ուղղությամբ»<sup>22</sup>: Հաշվետվությունը վերաբերում է նախորդ տարում կատարված աշխատանքներին: Հետևաբար՝ «կամ» շաղկապի գործածումը տեղին չէ: Հաշվետվության մեջ անդրադարձ է կատարվում միայն փաստացի կատարված աշխատանքներին, դրանց վերաբերյալ եզրակացություն է արվում:

«Ապրանքային շուկաների վերլուծություն» գլխում Հանձնաժողովը պարենային ապրանքների՝ 12, դեղերի՝ 10, կենցաղային տեխնիկայի՝ 4, լվացքի միջոցների՝ 2 և ազոտական պարարտանյութերի շուկաներում դիտարկել է միայն 2007 թ. տարեկան և 2008 թ. 6 ամսվա իրացման ծավալները, համակենտրոնացման գործակիցները (CR<sub>3</sub>), ֆիրմաների թիվը և 1-ին 3 խոշոր ֆիրմաների բաժինները<sup>23</sup>: Մինչդեռ, այդ ցուցանիշների պարզումը միայն վերլուծության «նախերգանքն» է: Ապրանքային շուկաների վերլուծության նպատակը դրանցում մրցակցային միջավայրի վիճակի գնահատումն է: Իսկ Հաշվետվության մեջ որևէ շուկայի վերաբերյալ գնահատական չի տրվել:

Հաշվետվության մեջ խոսք չկա այն մասին, թե ինչպես է կատարվել 2008 թվականի տարեկան գործունեության ծրագիրը: Ստացվում է, որ այդ ծրագիրը ինքնանպատակ է եղել:

Դրական առումով նախորդից առանձնապես չի տարբերվում **2015 թվականի Հաշվետվությունը**:

Այսպես օրինակ՝ նպարեղենի շուկայի «վերլուծության» մեջ նշված է. «Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից **իրացվող նպարեղենի գնի (առանց անուղղակի հարկեր) և ինքնարժեքի տարբերությունը չի գերազանցում 16 տոկոսը: Միաժամանակ, տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվում են նաև**

<sup>21</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1272&lang=arm>, <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=7540&lang=arm>

<sup>22</sup> ՀՀ ՏՄՊՊ 2008 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն՝ հաստատված Հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ 33-Ա որոշմամբ, էջ 2, [http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report\\_2008-2.pdf5](http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report_2008-2.pdf5)

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 6-13:

իրացման, վարչական, ֆինանսական և այլ ծախսեր, իսկ դրանք ինքնարժեքի հետ միասին դիտարկելու պարագայում, տնտեսվարող սուբյեկտների եկամտաբերությունների մակարդակները կարող են լինել տարեկան 5 տոկոսից ցածր, ինչն իր հերթին վկայում է ոլորտում առկա մրցակցությունը կտրուկ աճել է» (ընդգծումը հեղինակներինն է)<sup>24</sup>:

Վերոհիշյալ «վերլուծությունից» ակնհայտ է դառնում մասնագիտական «վրիպումը»՝

1) Շուկան վերլուծելու համար նախ անհրաժեշտ էր դրա ապրանքատեսակային, աշխարհագրական և ժամանակային սահմանները որոշել, ինչը հիմնավորումներ էր պահանջում, որը չի արվել:

2) Ակնառու են ապրանքի գնի կազմի և կառուցվածքի վերաբերյալ թյուրընկալումները: Հակառակ դեպքում չէր լինի 1-ին և 2-րդ նախադասությունների ընդգծված մասերի աչքի զարնող հակասությունը: Հանձնաժողովը կարող էր «գլխի ընկնել» իր եզրակացության անհեթեթության մասին, եթե փորձեր «5%-ից ցածր» ցուցանիշը հաշվարկով ստանալ: Միանշանակ չէ նաև այն եզրակացությունը, որ «...5%-ից ցածր եկամտաբերությունը» վկայում է, որ «առկա մրցակցությունը կտրուկ աճել է»: Օրինակ՝ գուցե դա պայմանավորված է այդ շուկայում 1-ին 5 տնտեսվարողների հակամրցակցային համաձայնությամբ: Հանձնաժողովը պարտավոր էր այդպիսի համաձայնության վարկածն էլ դիտարկել:

Նշանակում է՝ Հանձնաժողովը, առնվազն այդ ուսումնասիրության մասով, չի լուծել հաշվետվության «Ապրանքային շուկաների վերլուծություն» բաժնում նախատեսված խնդիրը:

Ախալների նման իներցիան շարունակվել է նաև Հանձնաժողովի ներկա կազմի գործունեության ընթացքում: Այսպես՝ **2019 թվականի տարեկան հաշվետվության** մեջ ներկայացվել է ապրանքային շուկաների ուսումնասիրությունը (ըստ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ պետք էր ներկայացնել ապրանքային շուկաների վերլուծությունը): Իհարկե, շուկաների ուսումնասիրության խնդիրներից մեկն էլ մրցակցային միջավայրի վերլուծությունն է: Սակայն Հաշվետվության մեջ ուսումնասիրությունը սահմանափակվել է միայն 6 ապրանքատեսակների ներմուծումների ու իրացումների ծավալների և դրանց մեջ առաջատար ֆիրմաների բաժինների ներկայացմամբ: «Ուսումնասիրված» 6 շուկայում էլ նկատվել են բացթողումներ և մեթոդական սխալներ: Օրինակ՝ «Շաքարավազ» ապրանքային շուկայի վերաբերյալ նշվել է. «Հանձնաժողովն արձանագրել է, որ 2018 թվականի հունվարից մինչև 2019 թվականի հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում շաքարավազի շուկան, ըստ ներմուծման և իրացման, ունեցել է բարձր կենտրոնացվածության մակարդակ» [6, էջ 53]: Ավելի քան 19 տարվա աշխատանքային փորձ ունեցող Հանձնաժողովը տեղյակ չէ, որ շուկայի ծավալը ներմուծման ծավալով չի որոշվում: Բնականաբար, նման մեթոդական սխալը ապրանքային շուկաների վերլուծության արժանահավատության վերաբերյալ կասկած է հարուցում:

**Բենզինի և դիզելային վառելիքի** ապրանքային շուկաների հետ կապված՝ նշվել է. «Ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի կողմից վեր

<sup>24</sup> ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2015 թ. տարեկան գործունեության հաշվետվություն, 2016, [http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report\\_2015-1.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report_2015-1.pdf), էջ 8:

են հանվել որոշ խնդիրներ, որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ մրցակցային միջավայրի վրա»<sup>25</sup>: «Կարող են» արտահայտությունը ցույց է տալիս, որ անմիջապես դրան հաջորդող «բացահայտված» խնդիրները ենթադրություններ են, ոչ թե «վեր հանված» փաստեր: Դրանք, լավագույն դեպքում, կարող են կանխարգելող դեր խաղալ:

Օրենքը 2021 թվականի մարտի 3-ին արմատական փոփոխությունների է ենթարկվել: Բավական է նշել, որ նախկին 42-ի փոխարեն խմբագրված տարբերակում 103 հոդված է ներառված: Հանձնաժողովը փորձել է **2021 թվականի Հաշվետվությունը** համապատասխանեցնել Օրենքի խմբագրված նոր տարբերակի պահանջներին:

Հաշվետվության «Մրցակցության պաշտպանություն և վերահսկողություն» (այսուհետ՝ ՄՊՎ) բաժնում ներկայացվել է Օրենքով նախատեսված մրցակցության պաշտպանության ուղղություններով Հանձնաժողովի իրականացրած վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը<sup>26</sup>:

Հանձնաժողովը հակամրցակցային համաձայնությունների առնչությամբ վարույթ է հարուցել «Գլոբալ Շիֆփինգ» և «Օնէքս» ՄՊԸ-ների, ինչպես նաև «Օնէքս» ՓԲԸ-ի նկատմամբ: Պարզել է, որ 2020 թ. հունվարի 1-ից մինչև 2021 թ. մարտի 31-ը ՄՊԸ-ները առցանց եղանակով ԱՄՆ-ից, ՌԴ-ից, Չինաստանից, ԱՄԷ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից և Իտալիայից նույն ապրանքատեսակները ծովային, օդային և վերգետնյա տրանսպորտով դեպի Հայաստան տեղափոխելու համար պահանջել են նույն սակագները և կատարել են դրանց միաժամանակյա փոփոխությունները: Եվս մեկ ապրանքատեսակի տեղափոխման համար դրանց առաջարկած ծառայությունների սակագների հետ համընկել են «Օնէքս» ՓԲԸ ծառայության սակագինը և դրա փոփոխությունը: Հանձնաժողովը 2021 թ. հունիսի 18-ի թիվ 123-Ա որոշմամբ 3 տնտեսավարողների գործողությունները որակել է հակամրցակցային և դրանց նկատմամբ տուգանք է կիրառել: Տնտեսավարողներին պատժում են փաստացի խախտման համար: Մեր կարծիքով՝ Հանձնաժողովը լիարժեք ուսումնասիրություն չի կատարել: Նախ՝ հարկավոր էր պարզել՝ արդյո՞ք այդ սուբյեկտների համատեղ բաժինը շուկայում հանգեցրել կամ կարող էր հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը<sup>27</sup> (2, հոդված 5, մաս 1): Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ էր պարզել, թե տվյալ ապրանքային շուկայում որո՞նք են օլիգոպոլ տնտեսավարող սուբյեկտները: Այսինքն՝ այն սուբյեկտները, որոնց բաժինները շուկայում զգալի են, և նրանք կարող էին միմյանց հետ հակամրցակցային համաձայնություն կնքել: Երկրորդ՝ հարկավոր էր հաշվարկներով պարզել՝ արդյո՞ք գների բարձրացումը սուբյեկտիվ գործոնով է պայմանավորված (դրա հետևանքով տնտեսավարողները գերշահույթներ են ստացել), թե՛ օբյեկտիվ: Հաշվետվության մեջ նման տեղեկատվություն չկա:

<sup>25</sup> ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2019 թ. տարեկան գործունեության հաշվետվություն, 2020, [http://competition.am/wp-content/uploads/2022/03/Annual\\_Report\\_2019-2.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/03/Annual_Report_2019-2.pdf), էջ 57:

<sup>26</sup> Տե՛ս ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2020 թ. տարեկան գործունեության հաշվետվություն, 2021, [http://competition.am/wp-content/uploads/2022/06/Hashvetvutyun\\_2021.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/06/Hashvetvutyun_2021.pdf), էջ 26-38:

<sup>27</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1272&lang>



**Գերիշխող դիրքի չարաշահում:** Հաշվետվության ՄՊՎ բաժնում, գերիշխող դիրքի չարաշահման հետ կապված, դիտարկվել է ձվի շրջանառության ոլորտը: Մասնավորապես՝ 2021 թ. մարտի 30-ին հարուցված վարույթի շրջանակում Հանձնաժողովը «պարզել» է, որ 2021 թ. մարտին Սբ Հարության տոնին նախորդող ժամանակահատվածում «Արաքս թռչնաֆարրիկա», «Աշտարակ Ձու» և «Արզնու տոհմային ԹՏԽ» ընկերությունները ստեղծել են արհեստական պակասուրդ և չհիմնավորված բարձրացրել են հավի ձվի գները: Հիմք ընդունելով այդ փաստը՝ Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 27-ի թիվ 174-Ա որոշմամբ այդ ընկերությունների նկատմամբ նշանակվել է համապատասխանաբար՝ 16,65 մլն դրամ, 15 մլն դրամ և 10,9 մլն դրամ տուգանք: Ամենայն հավանականությամբ, այդ ընկերությունները, Օրենքի 7-րդ հոդվածի, 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն, գերիշխող դիրք ունեն (որպես իրացնող՝ իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը): Դրա վերաբերյալ Հաշվետվության մեջ տեղեկություն չկա: Ընդունելով դրա հավանականությունը՝ այնուամենայնիվ, Հանձնաժողովը պետք է պարզեր նաև այն հանգամանքը, որ չէր բացառվում՝ այդ համաձայնությանը միացած լինի ևս մի քանի տնտեսավարող սուբյեկտ:

**Պետական օժանդակություն:** Օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Պետական օժանդակություն տրամադրող մարմինները պետական օժանդակության տրամադրումից հետո Հանձնաժողով են ներկայացնում իրենց տրամադրած պետական օժանդակության վերաբերյալ տեղեկատվությունը»<sup>28</sup>: Նույն հոդվածի 8-րդ մասի պահանջներից ելնելով՝ ՀՀ Կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի թիվ 784-Ն որոշմամբ<sup>29</sup> հաստատված՝ Հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման կարգի, ձևի ու ժամկետներին համապատասխան, պետական 12 մարմին 2020 թվականին պետական օժանդակություն տրամադրելուց հետո Հանձնաժողով է ներկայացրել 74920 օժանդակության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը: Ներկայացված տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովն Օրենքի իմաստով՝ առերևույթ պետական օժանդակություն հանդիսացող օժանդակությունները առանձնացրել և գրանցել է պետական օժանդակության միասնական գրանցամատյանում<sup>30</sup>: Նշանակում է՝ Հանձնաժողովը 1–1.5 տարվա ընթացքում ստացված օժանդակությունների վերաբերյալ դեռ գնահատական չի տվել:

Հաշվետվության մեջ խոսք չկա, թե Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասի պահանջին համապատասխան պետական օժանդակության տրամադրումը նախաձեռնող մարմինը կամ այն ստանալու համար դիմող տնտեսավարող սուբյեկտը պետական օժանդակություն տրամադրելու կամ այն ստանալու նպատակով դիմել են Հանձնաժողով՝ թույլտվություն ստանալու համար: Եթե դիմել են, ապա Հանձնաժողովը, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն, պար-

<sup>28</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1272&lang=arm>

<sup>29</sup> Տե՛ս «Պետական օժանդակություն տրամադրած մարմինների կողմից մրցակցության պաշտպանության հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման կարգը, ձևն ու ժամկետները սահմանելու մասին», ՀՀ Կառավարության 2020 թ. մայիսի 21-ի N 784-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=158180>, էջ 33:

<sup>30</sup> Տե՛ս ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2020 թ. տարեկան գործունեության հաշվետվություն, 2021, [http://competition.am/wp-content/uploads/2022/06/Hashvetvutyun\\_2021.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/06/Hashvetvutyun_2021.pdf)

տավոր էր պետական օժանդակության թույլատրելիության վերաբերյալ գնահատական տալ: Իսկ եթե չեն դիմել, ապա այդ գնահատականը պարտավոր էր տալ սեփական նախաձեռնությամբ:

**Պետական գնումներ և պետական մարմինների հակամրցակցային գործողություններ:** Հաշվետվության մեջ անդրադարձ կա պետական գնումներին և պետական կառավարման մարմինների հակամրցակցային գործողություններին: Առաջինի դեպքում մրցույթի պայմանները հարմարեցված են որոշակի տնտեսավարողի ունեցած պայմանագրային կետերին, երկրորդի պարագայում շուկայի մուտքի ուղղակի խոչընդոտ է հարուցվել: Երկու դեպքում էլ կիրառված պատժամիջոցը եղել է նախազգուշացումը. պատժամիջոց, որը երբեմն-երբեմն Հանձնաժողովի ստեղծման օրից առ այսօր կիրառվում է պետական մարմինների նկատմամբ: Մինչդեռ, եթե նույն պետական մարմնի կամ նրա պաշտոնատար անձի կատարած խախտման համար առաջին անգամ նախազգուշացում է արվել, ապա երկրորդ անգամ պետք է կիրառվի Օրենքի 98-րդ հոդվածը՝ պատժամիջոցը պետք է լինի հասցված վնասի հատուցումը:

Հանձնաժողովը նման «բարյացակամություն» դրսևորել է ոչ միայն պետական մարմինների, այլև որոշ տնտեսավարողների նկատմամբ<sup>31</sup>:

Անդրադառնանք նաև Հաշվետվության «Ոլորտային ուսումնասիրություններ» բաժնի մի քանի սխալների և բացթողումների:

**Թռչնամսի շրջանառության ոլորտի** ուսումնասիրության մեջ առանձնացվել է հավի մսի երեք տեսակ՝

1. տեխնոլոգիական վերամշակման տեսանկյունից վաճառվող հավի միս՝ ամբողջական կամ մասնատված (բացառությամբ ճտերի),
2. մկանների խորքում ջերմային տարբերություններից կախված՝ տարանջատվել են հավի թարմ, պաղեցված, սառեցված և խորը սառեցված տեսակներ,
3. որակական (յուղայնություն և վերամշակում) տեսանկյունից տարանջատվել են 1-ին և 2-րդ կարգեր:

Այս տարանջատումը «հուշում» է, որ հավի միսը չի կարող մեկ միասնական շուկայում ընդգրկվել: Այնուամենայնիվ, փաստական և թվական տվյալներով պետք է հիմնավորվեր՝ հավի միսը մեկ միասնական շուկայի ապրանք է, թե՞ ոչ:

Հանձնաժողովը «վերլուծելով» եզրակացնում է. «Ապառողները հեշտությամբ հավի մսի բոլոր տեսակները կարող են փոխարինել մեկը մյուսով, քանի որ որպես վերջնական օգտագործման ապրանք, ֆունկցիոնալ կիրառման և նշանակության տեսանկյունից, դրանք համարվում են նույն ապրանքը»<sup>32</sup>: Այստեղ թույլ է տրվում մեթոդական սխալ: Ապրանքը այս կամ այն շուկային վերագրելիս անհրաժեշտ է դիտարկել դա ոչ միայն «ֆունկցիոնալ կիրառման և նշանակության տեսանկյունից» (անհրաժեշտ պայման), այլև գնային: Նույն օգտակարությամբ ու սպառողական հատկանիշներով ապրանքը, գնային պարամետրով պայմանավորված, կարող է հայտնվել տարբեր ապրանքային

<sup>31</sup> Առավել հանգամանալից տե՛ս «Պետական օժանդակություն տրամադրած մարմինների կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման կարգը, ձևն ու ժամկետները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2020 թ. մայիսի 21 N 784-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=158180>, էջ 11–18:

<sup>32</sup> ՀՀ ՄՀՊ, [http://competition.am/wp-content/uploads/2022/03/Annual\\_Report\\_2019-2.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/03/Annual_Report_2019-2.pdf), էջ 41:

շուկաներում: Ուստի, հավի մսի վերը բերված տարբերակումները գործառնական նշանակությամբ գուցե նույնն են, սակայն օգտակարության հատկանիշներով ունեն տարբերություններ: Գնային պարամետրերի վերաբերյալ չկա տեղեկատվություն: Այդ տեսանկյունից ուսումնասիրություն չի կատարվել: Հետևաբար՝ Հանձնաժողովի եզրակացությունը, թե՛ «Հավի միս» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է հավի մսի բոլոր տեսակները, արժանահավատ չէ:

Նույնը կարելի է ասել շուկայի աշխարհագրական սահմանի վերաբերյալ: Այն հանգամանքը, որ «ՀՀ-ում իրացվող հավի միսը ձեռքբերման տեսանկյունից հավասարապես հասանելի է հանրապետության ողջ տարածքում, և գոյություն չունեն հավի միսը մարզեր տեղափոխելու հետ կապված խոչընդոտներ», դեռ չի նշանակում, թե «Հավի միս» ապրանքային շուկայի աշխարհագրական սահման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքը<sup>33</sup>: Այդ սահմանը որոշելու համար հարկավոր է սպառողի տեսանկյունից դիտել ոչ միայն ապրանքը ձեռք բերելու վարչական խոչընդոտներ չլինելու հանգամանքը, այլև այն ծախսերը, որոնք սպառողը պետք է կատարի երկրի տարբեր տարածքներ տեղափոխելիս: Դրա վերաբերյալ ուսումնասիրության մեջ տեղեկատվություն չկա: Առավել ևս, «վերլուծությունից» պարզ չէ, թե ուսումնասիրությունը ո՞ր շուկային է վերաբերում՝ մեծածախ, թե՛ մանրածախ:

**«Հում կաթ» ապրանքային շուկա:** Հում կաթը մթերվում է գյուղացիական տնտեսություններից: Ըստ Հանձնաժողովի՝ «Հում կաթ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է համարվել գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված և որևէ տեսակի վերամշակման չենթարկված կաթը, իսկ աշխարհագրական սահմանը՝ ՀՀ ողջ տարածքը: Տարբեր ընկերությունների հում կաթի մթերման միջին գներն էականորեն տարբերվում են<sup>34</sup>:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եզրակացրել է. «Կաթի մթերման շուկայում չկան գերիշխող դիրք ունեցող ընկերություններ. առաջին 3 խոշոր կաթ ձեռք բերող ընկերությունները 2020 թվականի մթերման ծավալներով զբաղեցնում են համապատասխանաբար շուկայի 27, 16 և 15 տոկոսը: Այնուամենայնիվ կաթնամթերք **արտադրողները մեծ հնարավորություն ունեն միակողմանիորեն ազդելու շուկայում մրցակցության հիմնական գործոն հանդիսացող կաթի մթերման գների վրա՝** հաշվի առնելով, որ կաթը հանդիսանում է շուտ փչացող ապրանք, և գյուղացիական տնտեսությունները շուկայում չեն կարող միասնական ուժ ներկայացնել և ունենալ հում կաթի իրացման գնի շուրջ բանակցելու կարողություն»<sup>35</sup>:

Ինչպես երևում է Հանձնաժողովի գնահատականից, չնայած հում կաթի մթերման գները տարբեր ընկերություններում էականորեն տարբերվում են, բայց Հանձնաժողովը հում կաթը դիտարկել է որպես ՀՀ ամբողջ տարածքում (աշխարհագրական սահմանում) մթերվող միասնական շուկա: Կաթի մթերման շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերություններ չլինելու և շուկայում

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 47:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 49:

մթերման գների վրա խոշոր ընկերությունների ազդելու մեծ հնարավորությունը տարակուսելի է թվում: Տարբեր ընկերությունների մթերած հում կաթի գների էական տարբերությունը նախնառաջ պայմանավորված է առանձին տարածաշրջանների բնակլիմայական պայմաններով: Նման պարագայում այդ ընկերություններին և նրանց մատակարարող գյուղացիական տնտեսություններին մեկ միասնական շուկայում դիտարկելը մասնագիտական առումով խիստ կասկածելի է և ոչ համոզիչ:

Փաստորեն, կա՛մ համատեղ գերիշխման չափանիշները օրենսդիրը ճիշտ չի ընտրել, կա՛մ ապրանքային շուկայի սահմանները ճիշտ չեն որոշվել: Մեր կարծիքով՝ ճիշտը 2-րդ տարբերակն է: Այսինքն՝ պատճառը Հանձնաժողովի և նրա անձնակազմի արհեստավարժության ցածր մակարդակն է:

Հանձնաժողովի արհեստավարժության մակարդակի բարձրացման ուղին դրա ձևավորման մեխանիզմը փոխելն է: Հարկ է նշել, որ 2018 թվականի մարտի 3-ին Հանձնաժողովի ձևավորման մեխանիզմը փոխվել է՝ նախագահին և անդամներին, ՀՀ վարչապետի ներկայացմամբ, ձայների պարզ մեծամասնությամբ 5 տարի պաշտոնավարման ժամկետով նշանակում է Ազգային ժողովը՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով (Օրենքի 20-րդ հոդված, մաս 2), սակայն դա սուբյեկտիվ գործոնի դերն ամենևին էլ չի չեզոքացրել: Այդ մասին են վկայում վերևում ներկայացված Հաշվետվություններում առկա սխալներն ու բացթողումները:

Արհեստավարժության առումով, Հանձնաժողովի անդամների նկատմամբ ներկայացվող պահանջը գրեթե չի փոխվել 03.03.2021 թ. Օրենքը Ազգային ժողովում նոր խմբագրությամբ ընդունելուց հետո էլ (հոդված 28-ի 3-րդ և 4-րդ մասեր)<sup>36</sup>: Սակայն այդ փոփոխությամբ էլ ՄԴՀ անդամների նկատմամբ արհեստավարժության պահանջ չի դրվել: Մեր կարծիքով՝ միայն կադրերի անկախ բանկերի ստեղծման շնորհիվ հնարավոր կլինի պետական այդ կառույցի արհեստավարժության մակարդակը բարձրացնել: Մասնավորապես՝ անհրաժեշտ է մասնագիտական արհեստավարժության որոշակի չափանիշներով ձևավորել երեք՝ միմյանցից անկախ կադրային բանկ (այսուհետ՝ ԿԲ): Առաջին երկու բանկերը պետք է ձևավորեն Ազգային ժողովի (այսուհետ՝ ԱԺ) մեծամասնական (կամ կոալիցիայի) և փոքրամասնական (կամ կոալիցիայի) խմբակցությունները, երրորդ բանկը՝ Կառավարությունը: ԿԲ-ների ցուցակային կազմը հրապարակվում է ԱԺ կայքէջում և հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամին: Այդ բանկերում ներառված Հանձնաժողովի անդամների անհատական կազմը իշխանությունների փոփոխությունների հետևանքով չեն փոփոխվում: Դրանց կազմերը անձեռնմխելի են: Դրանցից են ձևավորվելու Հանձնաժողովները (առաջին երկու բանկից՝ հավասար թվով,

<sup>36</sup> Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող անձը, որն ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ հայեցողական պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման կամ համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից): Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն,

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=7540&lang=arm>

իսկ Կառավարության բանկից՝ 1-ով պակաս): ԿԲ-ները կարող են համալրվել միայն նոր անդամներով, բայց ոչ՝ այդ բանկերում ընդգրկված անդամների փոխարեն:

**Եզրակացություններ:** Կատարված հետազոտությունը հեղինակներին հնարավորություն է տվել եզրակացնելու.

1. Հանձնաժողովի գործունեությունը ցույց է տալիս, որ, որոշակի դրական փորձի հետ մեկտեղ, պետական մարմնի կատարած ապրանքային շուկաների ուսումնասիրությունների, հաշվետվությունների զգալի մասի դիտարկումները փաստում են, որ առկա են մեծ թվով մասնագիտական բացթողումներ և սխալներ: Հեղինակների կարծիքով՝ դա հիմնականում պայմանավորված է Հանձնաժողովի կազմի հաճախակի փոփոխությամբ և կառավարման այս մարմնի ձևավորման մեխանիզմի անկատարությամբ: Մասնավորապես՝ Հանձնաժողովի 2008 թվականի հաշվետվության «Ապրանքային շուկաների վերլուծություն» գլխում ներկայացված ցուցանիշները անհրաժեշտ են վերլուծության համար, բայց բավարար չեն՝ մրցակցային վիճակը գնահատելու: Իսկ Հաշվետվության մեջ որևէ ապրանքային շուկայի վերաբերյալ գնահատական չի տրվել:

2. 2015 թվականի Հաշվետվության նպարտեղենի շուկայի վերլուծության մեջ մրցակցային վիճակի վերաբերյալ արված գնահատականը արժանահավատ չէ, քանի որ ապրանքատեսակային, աշխարհագրական և ժամանակային սահմանները չեն որոշվել, և միայն ապրանքի գնի ու ինքնարժեքի միջև եղած տարբերությամբ (16%) կողմնորոշվելը սխալ է:

3. 2019 թվականի տարեկան գործունեության հաշվետվության մեջ «Շաքարավազ» ապրանքային շուկայի ծավալը որոշվել է ներմուծման և իրացման ծավալներով, որը վկայում է համապատասխան ստորաբաժանման (նաև՝ Հանձնաժողովի անդամների) մասնագիտական անիրագրելիության մասին:

4. Հանձնաժողովի 2021 թվականի տարեկան գործունեության հաշվետվության մեջ ներառված տարբեր շուկաների և ոլորտային ուսումնասիրությունների ընթացքում թույլ են տրվել մեթոդական ու մասնագիտական սխալներ, առկա են թյուրիմացություններ:

5. Հանձնաժողովի չորս տարվա գործունեության Հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա են մասնագիտական շատ սխալներ և բացթողումներ: Դրանց հիմնական պատճառը Հանձնաժողովի գործունեության անարդյունավետությունն է: Իսկ դրան նպաստել է Հանձնաժողովի կազմի ձևավորման մեխանիզմի ներկա համակարգը:

6. Գրականության ակնարկում վկայակոչված հեղինակների կողմից ևս բենզինի և դիզելային վառելիքի շուկաների վերաբերյալ ներկայացվել է Հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո (2018 թ. հունվարի 1-ից) դրա ազդեցությունը բենզինի և դիզելային վառելիքի գների վրա, հաշվարկներով ցույց են տրվել, որ այդ ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողների չարաշահումներ: Մինչդեռ, պատասխանատու պետական մարմինը ճիշտ չի արձագանքել այդ չարաշահումներին:

7. Հանձնաժողովի նախագահի և անդամների փոփոխություններն ուղեկցվել են աշխատակազմի չհիմնավորված փոփոխությամբ և կադրերի մեծ հոսունությամբ:

Հանձնաժողովի և աշխատակազմի արհեստավարժության մակարդակի էական բարձրացում կապահովվի պրոֆեսիոնալ հիմքով կադրերի թափանցիկ, անկախ և արհեստավարժ բանկերի ձևավորման շնորհիվ:

### Օգտագործված գրականություն

1. Միքայելյան Մ., Տնտեսական մրցակցություն և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Նահապետ», 2005, 253 էջ:
2. Միքայելյան Մ., ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կատարելագործման մի քանի հարց, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 13 (20), 2002, էջ 19-24:
3. Միքայելյան Գ., ԱՊՀ երկրների հակամենաշնորհային քաղաքականության միտումները 21-րդ դարի սկզբում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 564-565:
4. Միքայելյան Գ., ԱՊՀ երկրների ապրանքային շուկաներում ֆիրմաների գերիշխող դիրքի կարգավորումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3 (623), 2008, էջ 113-120:
5. Միքայելյան Գ., Պետական օժանդակությունը և դրա հակամենաշնորհային կարգավորումը ԱՊՀ երկրներում, «Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում», գիտաժողովի նյութեր, Եր., 2009, էջ 267-269:
6. Միքայելյան Մ., Անբարեխիղճ մրցակցությունը և Հայաստանում դրա կարգավորման մարտահրավերները, «Բանբեր Երևանի համալսարանի. սոցիոլոգիա, տնտեսագիտություն», N 3 (24), 2017, էջ 11-18:
7. Միքայելյան Մ., ՀՀ պետական ինքնավար մարմինների ձևավորման և անկախության ապահովման հարցի շուրջ, Եր., «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (21), 2019, էջ 137-145:
8. Միքայելյան Գ., Տնտեսական մրցակցության կարգավորման Եվրամիության փորձի կիրառման նպատակահարմարությունը ԱՊՀ ընդհանուր տնտեսական տարածքում, Եր., Եվրոպական ակադեմիա: Գիտական հոդվածների ժողովածու, թ. 1 (01), 2011, էջ 55-71:  
Միքայելյան Գ., Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում որոշ կոռուպցիոն ռիսկերի մասին: Եր., Եվրոպական ակադեմիա: Գիտական հոդվածների ժողովածու, թ. 6, 2015, էջ 255-260:
9. Վարագդատյան Տ., Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման արդի հիմնախնդիրների հաղթահարման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Ը 00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2016, 27 էջ:
10. Հովհաննիսյան Դ., Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում, Եր., 2023, 200 էջ:

11. Mikayelyan M.V., Markosyan A.Kh., Matevosyan E.N., Miqaelyan Sh.S., Round the issue of the protection of economic competition; Bulletin of high technology, Shushi, 2(6)/ 2018, p. 61-67.
12. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 06.11.2000 թ., <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1272&lang=arm>
13. ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=7540&lang=arm>
14. ՀՀ ՏՄՊՊ 2008 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն՝ հաստատված Հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ 33-Ա որոշմամբ, [http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report\\_2008-2.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report_2008-2.pdf)
15. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2015 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն, 2016, [http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report\\_2015-1.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/03/Report_2015-1.pdf)
16. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2019 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն, 2020, [http://competition.am/wp-content/uploads/2022/03/Annual\\_Report\\_2019-2.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/03/Annual_Report_2019-2.pdf)
17. ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2020 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն, 2021, [http://competition.am/wp-content/uploads/2022/06/Hashvetvutyun\\_2021.pdf](http://competition.am/wp-content/uploads/2022/06/Hashvetvutyun_2021.pdf)
18. «Պետական օժանդակություն տրամադրած մարմինների կողմից մրցակցության պաշտպանության հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման կարգը, ձևն ու ժամկետները սահմանելու մասին», ՀՀ Կառավարության 2020 թ. մայիսի 21-ի N 784-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=158180>

### МИКАЕЛ МИКАЕЛЯН

*Профессор кафедры экономики и международных экономических отношений ЕГУ. Ведущий научный сотрудник Института экономики имени М. Котаняна Национальной академии наук Республики Армения, доктор экономических наук, профессор*

### ԳԱԲՐԻԵԼ ՄԻԿԱԵԼՅԱՆ

*Доцент кафедры финансового учета АГЭУ, кандидат экономических наук*

**Некоторые вопросы защиты экономической конкуренции в Армении.** – Комиссии по защите конкуренции (далее – Комиссия или КЗК) показывает, что, несмотря на определенный положительный опыт, государственный орган не добился серьезных профессиональных успехов. По мнению авторов,

это связано с частой сменой состава комиссии и несовершенством механизма формирования этого органа управления. Об этом свидетельствует изучение годовых программ и отчетов Комиссии разных периодов.

При анализе товарных рынков наблюдается большое количество профессиональных ошибок и упущений. В частности, количество фирм, их объемы продаж, коэффициенты концентрации (CR3) и подразделения первых трех крупнейших фирм были представлены в главе «Анализ товарных рынков» отчета Комиссии за 2008 год. Между тем, выяснение этих показателей является лишь элементом анализа. Целью анализа товарных рынков является оценка состояния конкурентной среды на этих рынках. Однако в Отчете отсутствует оценка для какого-либо из рынков. Это доказывает, что члены комиссии и соответствующие специалисты аппарата не обладают необходимыми профессиональными качествами.

Во многих случаях это является причиной недостоверности оценки конкурентной среды.

По мнению авторов, формирование комиссии должно исключить влияние субъективных факторов. В частности, этого можно достичь благодаря формированию профессиональных, независимых и прозрачных кадровых банков.

**Ключевые слова:** *товарный рынок, географическая граница, товарная граница, временная граница, государственный орган, кадровый банк*

JEL: G18, L40, O17

DOI: 10.52174/29538114\_2024.2-120

## MIKAYEL MIKAYELYAN

*Doctor of Economics, Professor,*

*Professor of the Department of Economics and*

*International Economic Relations of Yerevan State University.*

*Leading Researcher at the Institute of Economics named after M. Kotanyan*

*National Academy of Sciences of the Republic of Armenia.*

## GABRIEL MIKAYELYAN

*Associate Professor of the Department of Financial Accounting at ASUE,*

*PhD in Economics, Associate Professor*

***Some issues of protecting economic competition in Armenia.***– More than 23 years of activity of the Commission for the Protection of Competition (hereinafter referred to as the Commission or KPC) shows that, despite some positive experience, the government body has not achieved serious professional success. According to the authors, this is due to a disrespectful change in the composition of the commission and the imperfection of the mechanism for forming this governing



body. This is evidenced by the study of annual programs and reports of the Commission of different periods.

The analysis of commodity markets reveals a large number of professional errors and omissions. In particular, the number of firms, their sales volumes, concentration ratios (CR3) and divisions of the top three largest firms were presented in the chapter “Product Market Analysis” of the Commission's 2008 report. However, identifying these indicators represents only one element of a comprehensive analysis. The purpose of product market analysis is to assess the state of the competitive environment within these markets, yet the report does not provide any such evaluations. This omission suggests that the commission members and relevant specialists lack the necessary professional expertise. In many cases, this is the reason for the unreliability of the assessment of the competitive environment.

According to the authors, the formation of a commission should exclude the influence of subjective factors. In particular, this can be achieved through the formation of professional, independent and transparent recruitment banks.

**Keywords:** *commodity market, geographical border, commodity border, temporary border, government agency, personnel bank*

JEL: G18, L40, O17

DOI: 10.52174/29538114\_2024.2-120